

## ԱՐՏԱՇԵՍ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

### Ի՞ՆՉ ՏՎԵՑ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Ինչքան էլ ամոթ լինի խոստովանելը, քանի գնում՝ այնքան շահասեր ենք դառնում: Ամեն ինչ սկզբից չափում ենք ու գրամ-գրամ կշռում: Ի՞նչ կտա մեզ, ի՞նչ կշահենք, ի՞նչ օգուտ կունենանք: Բանն այնտեղ է հասել, որ ուզում ենք կոնկրետ օգուտ ունենալ նույնիսկ այնպիսի մի վերացական հասկացողությունից, ինչպիսին վերակառուցումն է:

Ի՞նչ օգուտ, ի՞նչ շահ եք ուզում ունենալ: Որ վերակառուցումը մի՞ստա, երջիկ տա՞ ձեզ, կոշիկ ու օձա՞ն: Ապշելու ժողովուրդ եք: Վերակառուցումը դեկավարներին կցված խանո՞ւթ է, ինչ է: Վերակառուցմանը որտեղի՞ց միս ու օձառ: Ինչ եղել է վերակառուցումից առաջ եղել է ու վերակառուցման հետ վերացել է:

Եվ, վերջապես, օգուտը հո միայն նյութական պատկեր չի ունենում: Եկեք այլ տեսանկյունից դիտենք, քի չ՝ քան տվեց մեզ վերակառուցումը ընդհանրապես, ընդհանուր առմամբ, թեկուզ... մեր լեզվաբանությանը: Այո, այո լեզվաբանությանը:

Միթե՞ մինչեվ վերակառուցումը մեր բառապաշարն այսքան ճոխ, այսքան հարուստ էր: Եկեք երախտամոռ չլինենք, մինչեվ վերակառուցումը որեւէ մեկը լսած կա՞ր «պլյուրալիզմ» բառը: Ճիշտ է այսօր էլ այդ բառը ոչ մեկը հստակ չի կարողանում արտասանել, բայց այն հիմնավորապես մտավ մեր լեզվական ֆոնդի մեջ: Ով բեմ է նվաճում, ասում է՝ պլյուրալիզմ, շփոթում է, սխալվում, հատկապես, երբ հայ է խոսողը՝ ուրիշ բառի հետ է շփոթում, ու ամոթից կարմրում է, բայց միևնույն է կարմրում է, բայց միևնույն է՝ ասում է պլյու... պլյու... լավ, վերջացնենք:

Կամ մինչև վերակառուցումը ո՞վ գիտեր, թե ինչ բան է ռեզիոնը: Ի՞նչ է ռեզիոն չկա՞ր: Բայց այդ ռեզիոն կոչվածում որեւէ բան չէր կատարվում, որ արժանի լիներ հիշատակման: Իսկ հիմա՝ խնդրեմ, «ռեզիոնում վիճակն անհանգիստ է», «ռեզիոնում դրությունը լարված է», «ռեզիոնում այս չկա, այն չկա, բայց փոխարենը այդ նույն ռեզիոնում զենք կա, զորք կա: Մի խոսքով՝ ինչ-որ բաներ այնուամենայնիվ կան: Նույնիսկ «Միջռեզիոնալ խումբ» կա:

Առաջին անգամ լսեցինք նաեւ «ալտերնատիվ» բառը: Ստալինյան բռնապետության, բրեժնևյան լճացման եվ չեռնենկոյան մահացման տարիներին մի շարք կարևոր բառերի հետ մեզնից թաքցրել էին նաեւ «ալտերնատիվը»: Իհարկե, խոսքը մեր մեջ, կոշտուկոպիտ բառ է: Երևի դա է պատճառը, որ հիմա էլ մեծ դժվարությամբ է ընդունվում: Բառը դեռ ոչինչ, մի կերպ ատասանում են, բայց օգտագործել չեն՝ կարողանում՝ սահմանադրության այս կամ այն հոդվածների և ընտրությունների կապակցությամբ:

Չէ, վերակառուցումը շատ հարստացրեց մեր լեզուն: Նախկինում, երբ մեկը հարցնում էր՝ ո՞նց ես, ասում էիր լավ եմ կամ վատ եմ: Իսկ հիմա... «ո՞նց ես», հարցնում եմ: «Դրան միանշանակ պատասխանել չեմ կարող» -պատասխանում է դիմացինս:

Միանշանակ... Ցնդել կարելի է:

Բա հետևանքները...

Առաջ հազար տեսակ հետևանքներ կային, ու թվում էր, թե այլևս տեղ չկա: Բայց վերակառուցումը մեզ տվեց հազար ու մեկերորդը, որն այդ հազարին արժե: «Անկանխատեսելի հետևանքներ»: Դե սա բոլորովին ուրիշ բան է: Մա նույնիսկ սարսափազդու է, երբ ղեկավարությունն ասում է՝ խելոք մնացեք, որովհետև դա անկանխատեսելի հետևանքներ կարող է ունենալ: Հաց մի ուզեք, որովհետև դա անկանխատեսելի հետևանքներ կարող է ունենալ: Եվ աստված չանի, եթե հանկարծ ազատություն և անկախություն ցանկանաք, որովհետև հետևանքները շատ ավելի անկանխատեսելի կդառնան:

Ահա թե ինչ տվեց մեզ վերակառուցումը՝ ինքնատիպ, բոլորովին չօգտագործված, փայլուն բառեր... Լա՛վ, վերջացնենք: Եթե անկեղծ գրեմ այն, ինչ մտածում եմ, այս ամենի մասին, վախենամ թե հետևանքներն ինձ համար ևս չափից ավելի անկանխատեսելի լինեն: